ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Գ-20

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«25» 01 2021 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Ռոբերտ Ղազարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը», «Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը», «Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված 84684.200 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,

2.4.6 Կոմիտե ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 84684200 (ութսունչորս միլիոն վեց հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգ

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Կոմիտեն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահություն

ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4
Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք
ՀՎՀՀ 900018005299

Տնօրեն՝

Ռ. Ղազարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ (Ռոբերտ Ղազարյան)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 1
«25» 01 2021. թ.
N Ա-20 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «25» 01 2021 թ. N Ա-20 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 84,684,200 (ութսունչորս միլիոն վեց հարյուր ութսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ նախագահություն ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24 Հ/հ 900011024115 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան (ստորագրություն)	ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4 Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք ՀՎՀՀ 900018005299 Տնօրեն՝ Ռ. Ղազարյան (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
«25» 01 2021 թ.
N 2-20 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը», «Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը», «Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր)

Աշխատանքի նպատակը

Ներկայացնել և վեր հանել Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները, ինչպես նաև ուսումնասիրել մերձավորարևելյան, արևելաասիական և հարավկովկասյան աշխարհաքաղաքական համակարգը, նրա երեք՝ մերձավորարևելյան (արաբական երկրներ, Թուրքիա, Իրան), արևելաասիական (Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա) և այսրկովկասյան (Վրաստան, Ադրբեջան) բաղկացուցիչները, միջազգային և տարածաշրջանային հարաբերությունները, ցույց տալ ռազմավարական բնույթի տեղաշարժերը և նոր, գլոբալ իրողությունների հաստատումը և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության վրա: Խնդիր է դրվում նաև ուսումնասիրել և ներկայացնել հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին:

Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների ներքին կյանքի՝ հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրությունն ունի գիտական և քաղաքական կարևորություն: Միաժամանակ հարկ է նշել, որ Իրանի, Թուրքիայի և արաբական երկրների քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունների բացահայտումը՝ յուրաքանչյուր երկրի յուրահատկությունները հաշվի առնելու հիմքի վրա, հանդիսանում է արևելագիտության առջև կանգնած առանցքային հիմնախնդիրներից մեկը: Հարկավոր է ուսումնասիրել Մերձավորարևելյան, Արևելյան ասիական և Այսրկովկասյան աշխարհաքաղաքական համակարգը, նրա երեք՝ Մերձավորարևելյան (Արաբական երկրներ, Թուրքիա, Իրան), Արևելաասիական (Հնդկաստան, Չինաստան, Ճապոնիա) և Այսրկովկասյան (Վրաստան, Ադրբեջան) բաղկացուցիչներ, միջազգային և

տարածաշրջանային հարաբերությունները, ցույց տալ ստրատեգիական բնույթի տեղաշարժերը և նոր գլոբալ իրողությունների հաստատումը: Կքննարկվեն այդ երկրների արտաքին քաղաքականության հանգուցային հարցերը:

Այդ հիմնախնդիրների լուսաբանության մեջ կարևոր տեղ կհատկացվի քաղաքական, տնտեսական, ռազմավարական և միջազգային գործոնների ուսումնասիրությանը, որոնք ներազդում են աշխարհաքաղաքական համակարգի ձևավորման վրա և առաջացնում գլոբալ բնույթի տեղաշարժեր:

Հատուկ ուշադրություն պետք է դարձվի Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ պետության միջազգային ասպարեզում հայտնվելուն, նրա քաղաքական և տնտեսական հարաբերությունների հաստատման ու զարգացմանը աշխարհաքաղաքական այդ համակարգի երկրների հետ, կուսումնասիրվեն նրա միջազգային և տարածաշրջանային գործոնի վերածվելու օրինաչափությունները: Ցույց կտրվի այս ուղղության ուսումնասիրության գիտական և քաղաքական կարևորությունը Հայաստանի համար, քանի որ սա անմիջականորեն առնչվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության, սոցիալ-տնտեսական զարգացման և միջազգային ու տարածաշրջանային հարաբերություններում նրա տեղի ու դերի կենսական կարևոր խնդիրների հետ: Հատուկ ուշադրություն կդարձվի վերոհիշյալ հիմնախնդիրներին վերաբերող սկզբնաղբյուրների, մասնավորապես տարբեր լեզուներով պաշտոնական փաստաթղթերի հայթայթմանը և նրանց մասնագիտական ուսումնասիրությանը:

Խնդիր է դրվում ուսունասիրել նաև հին արևելյան աղբյուրների երկու խումբ՝ հինարևելյան սեպագիր աղբյուրներ և հինարևելյան նարատիվ՝ պատմողական աղբյուրներ: Մյուս կարևոր խնդիրը Հայաստանի և հայերի մասին արևելյան միջնադարյան և նոր շրջանի աղբյուրների ուսումնասիրությունն է: Այդ կապակցությամբ պահանջվում է Այսրկովկասյան երկրների և ժողովուրդների բազմալեզու սկզբնաղբյուրների վերծանությունը, թարգմանությունը և հետազոտությունը: Այդ աղբյուրները երեք բնույթի են՝ պատմողական, վիճակագիր և վավերագրական:

Այս ուղղության մեջ կարևոր բնագավառ է նաև հայատառ թուրքերենի ուսումնասիրությունը:

Աշխատանքի բովանդակությունը

- Ծրագիրն իր մեջ ներառում է մի քանի ուղղություններ՝ Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և

էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը, Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը, Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին:

- Սույն Ծրագիրն իր բնույթով և հիմնախնդիրների ընդգրկումով, բազմապլանային է և ընդգրկում է ՀՀ արտաքին քաղաքականության համար քաղաքական, հասարակական, սոցիալական և տնտեսական կարևորագույն խնդիրներ.
- Մերձավոր և Միջին Արևելքի երկրները, որպես բազմաէթնիկ և բազմակոնֆեսիոնալ երկրներ, նրանց իրավական կարգավիճակը, սոցիալական դրությունը, էթնիկական ինքնության պահպանման այլ հարցեր, ուծացման գործընթացները, որոնք կարևոր նշանակություն ունեն այդ երկրների ներքաղաքական զարգացումները հասկանալու տեսակետից: Այդ հարցի հետ սերտորեն աղերսվում են հայ համայնքների պատմությունը, այդ թվում և ժամանակակից փուլում նրանց վիճակի, ներհամայնքային հարցերի և Հայաստանի Հանրապետության հետ կապերի զարգացման խնդիրները:
- Իրանը և իրանական պետական կազմավորումները միջին դարերում: Քաղաքական զարգացումներն Իրանում XIX-XX դարերում: Իրանը շահական վարչակարգի տապալումից և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) հռչակումից հետո: Իրանական աստվածապետությունը և իսլամական հեղափոխությունից հետո կատարված կառուցվածքային փոփոխությունները: Իրանական իսլամական հեղափոխության արտահանման և ԻԻՀ-ն որպես աստվածապետության մոդելի հարցերը:
- Իրանի նշանակությունը Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ՝ թուրք-ադրբեջանական տնտեսական-կոմունիկացիոն շրջափակման պայմաններում: Հայ-իրանական տնտեսական համագործակցության ոլորտները և հեռանկարները: Հյուսիս-Հարավ միջանցքի ստրատեգիական նշանակությունը:
- Օսմանյան կայսրությունը (XIII դ. - 1918 թ.), նրա ձևավորումը և արգելակիչ դերը տարածաշրջանային զարգացումներում, մասնավորապես Մերձավոր Արևելքում և Բալկաններում: Օսմանյան կայսրությունը որպես բազմազգ պետություն, նրա պետական կարգը և սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Ջարդերի և կազմակերպված կոտորածների քաղաքականությունը որպես Օսմանյան կայսրության պաշտոնական քաղաքականություն: Օսմանիզմը և պանթյուրքիզմը և ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման և էթնիկապես «մաքուր» թուրքական պետություն

ստեղծելու գաղափարախոսությունը: Հայոց ցեղասպանությունը՝ XX դարի առաջին ցեղասպանություն: Նրա պատճառները և հետևանքները:

- Թուրքիայի Հանրապետությունը, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ: Քեմալիզմը, նրա հիմնադրույթները և էությունը: Քեմալականների և բոլշևիկների կողմից Հայաստանի մասնատումը: Զինվորականների գերակայող դերը Թուրքիայի Հանրապետության կառավարման համակարգում: Թուրքիայի քաղաքական կուսակցությունները: Պետական հեղաշրջումները և քաղաքական ու տնտեսական ճգնաժամերը Թուրքիայում XX դարի երկրորդ կեսերին - XXI դարի սկզբներին: Իսլամի դիրքերի ուժեղացումը: Հայաստանի Հանրապետության տնտեսական շրջափակումը Թուրքիայի կողմից:
- Հայ-արաբական առևտրատնտեսական հարաբերությունները, նրանց բնույթը, ներկա մակարդակը և զարգացման հեռանկարները Եգիպտոսի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Հորդանանի և Պարսից ծոցի երկրների հետ:
- Արաբական Արևելքի երկրները, նրանց պետական կառուցվածքը և դրանց յուրահատկությունները, կառավարող էլիտայի սոցիալական կազմը և նրա ձևավորման ուղիները պատմական տարբեր ժամանակահատվածներում, զարգացման ուղիների ընտրությունը, սոցիալ-քաղաքական բուրգը և դրա բաղադրիչները, ժողովրդական զանգվածների տեղը և դերը քաղաքական և հասարակական կառուցվածքում, քաղաքական կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, միությունները, մարդագրական գործընթացները, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման դինամիկան՝ գլոբալիզացիայի պայմաններում, տնտեսական գործոնի նշանակությունը միջարաբական հարաբերություններում: Սիրիական ճգնաժամը և դրա ազդեցությունը տարածաշրջանային գործընթացներում:
- Իսլամի ակտիվացումը Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պետական, հասարակական, քաղաքական և մշակութային կյանքում և ակտիվացման պատճառները: Իսլամական միջազգային կազմակերպությունները և նրանց գործունեությունը Մերձավոր և Միջին Արևելքում: Նրանց ծրագրային պահանջները: Իսլամը և ահաբեկչությունը: Քաղաքակրթությունների երկխոսություն իսլամ - քրիստոնեություն փոխհարաբերությունների համակարգում:
- Տարածաշրջանի երկրների արտաքին քաղաքականությունը և նրանց հետ Հայաստանի երրորդ հանրապետության միջպետական հարաբերությունների ուսումնասիրությունը: Առանձնահատուկ տեղ կգրավի միջարաբական հարաբերությունների, Արաբական Արևելքի երկրների, Թուրքիայի և Իրանի արտաքին

քաղաքականության վեկտորների և Հայաստանի հարաբերությունների հարցն իր անմիջական հարևանների՝ Իրանի և Թուրքիայի հետ:

- Արևելյան Ասիայի երկրների՝ Հնդկաստանի, Չինաստանի և Ճապոնիայի արտաքին քաղաքական և ստրատեգիական ուղղությունների հիմնահարցերը, այդ թվում նրանց աշխարհաքաղաքական շահերը Այսրկովկասում, Կենտրոնական Ասիայում և Մերձավոր ու Միջին Արևելքում: Այդ ուղղության բաղկացուցիչ մասն է կազմում Արևելյան Ասիայի հետ Հայաստանի քաղաքական, տնտեսական և պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը:
- Հարավային Կովկասի պատմության հիմնախնդիրների, հայ-վրացական պատմական առնչությունների ուսումնասիրում: Թյուրքական տարրի ներխուժումը և հաստատումը Հարավային Կովկասում, էթնոդավանական և մշակութային առնչությունների խնդիրը: Հայ ժողովրդի դերը Հարավային Կովկասի պատմական, քաղաքական, մշակութային, տնտեսական կյանքում: Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը: Ադրբեջանի «պատմագիտական» կեղծարարությունների դեմ պայքարը:
- Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը: Կովկասյան երկրների փոխհարաբերությունները, հակամարտությունները և մեծ տերությունների քաղաքականությունը Կովկասում: Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ: Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային խնդիրների ուսումնասիրությունը:
- Այն հիմնախնդիրները, որոնք վերաբերում են ոչ թե մեկ առանձին երկրի կամ առանձին տարածաշրջանի, այլ ամբողջ այսրկովկասյան–մերձավորարևելյան-արևելաասիական աշխարհաքաղաքական տարածքին: Դրանց թվին առաջին հերթին պատկանում է պանթուրքիզմի խիստ վտանգավոր տեսության և պրակտիկայի հարցը, որի հետևում կանգնած են Թուրքիան և թուրքական ռասիստական ուժերը:
- Սեպագիր աղբյուրներով ավանդված քաղաքակրթությունների պատմության հետազոտումը և դրանց՝ հայ ժողովրդի և Հայաստանի հնագույն և հին դարաշրջանի պատմության հետ առնչության համակողմանի ուսումնասիրությունը:
- Արևելյան միջնադարյան և նոր շրջանի աղբյուրներ (պատմողական, վիմագիր և վավերագրական)՝ արաբական, թուրքական, պարսկական, այդ թվում և սասանյան շրջանի, հունական, ասորական և վրացական սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը և նրանց հայերեն թարգմանությունը:

- Հայատառ թուրքերենի որպես մի ինքնատիպ մատենագրության ուսումնասիրությունը:
- Քուրդ ժողովրդի պատմության, հայ-քրդական պատմամշակութային կապերի, քաղաքական հարաբերությունների հետազոտում:

Կազմակերպության տնօրեն՝ _____ Ռոբերտ Ղազարյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ Ռոբերտ Ղազարյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված N 3
«25» 01 2021թ.
N Ա·20 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՑԻՆ ՊԼԱՆ *

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը», «Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը», «Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
	«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը», «Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը», «Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին»	Ծրագիրն իր մեջ ներառում է մի քանի ուղղություններ՝ Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը, Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը, Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին: Սույն Ծրագիրն իր բնույթով և հիմնախնդիրների ընդգրկումով, բազմապլանային է և ընդգրկում է ՀՀ արտաքին քաղաքականության համար քաղաքական,		Հրապարակումների տեսքով ներկայացնել արդյունքները գրախոսվող ամսագրերում. հաստատված գիտական խորհրդի կողմից:	08.01.2021 թ.-30.12.2021	84.684.2

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

		հասարակական, սոցիալական և տնտեսական կարևորագույն խնդիրներ				
Ընդամենը						84.684.2

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ **Ռոբերտ Ղազարյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ **Ռոբերտ Ղազարյան**
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 4
«25» 01 2021 թ.
N 2-20 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը», «Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը», «Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	**74579.0**	***14915.8***	***18644.8***	***18644.8***	***22373.6***
2	տնտեսական և այլ ծախսեր՝*	**10105.2**	***2021.0***	***2526.3***	***2526.3***	***3031.6***
ԸՆԴԱՄԵՆԸ		**84684.2**	***16936.8***	***21171.1***	***21171.1***	***25405.2***

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ *(ստորագրություն)* Ռոբերտ Ղազարյան *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ *(ստորագրություն)* Կարինե Ստեփանյան *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար նախատեսել ծրագրի ֆինանսավորման առնվազն 3%-ը, մյուս գիտական կազմակերպություններում իրականացվող ծրագրերի համար՝ առնվազն 5%-ը*

Հավելված N 4.1
«25» 01 20.. թ.
N Ա-20 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	3410.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*950.0*
	գազի ծառայություն	*1340.0*
	ջրամատակարարման ծառայություն	*370.0*
	կապի ծառայություն	*750.0*
	աղբահանություն	
2	Գույք	200.0
3	Սարքեր և սարքավորումներ	800.0
4	Նյութեր	1600.0
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	500.0
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	2000.0
9	Այլ ծախսեր	1595.2
Ընդամենը		**10105.2**

Կազմակերպության տնօրեն՝ _____ Ռոբերտ Ղազարյան
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Կարինե Ստեփանյան
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.

---

† *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված N 5
«25» 01. 2021 թ.
N 12-20 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը», «Միջազգային հարաբերությունները Մերձավոր և Միջին Արևելքում, Արևելյան Ասիայում, Հարավային Կովկասում և Հայաստանի Հանրապետությունը», «Հին, միջնադարյան և նոր շրջանի արևելյան աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը՞ (հազար դրամ)
1	Ղազարյան Ռոբերտ Պետրոսի	տնօրեն	պ.գ.թ.	238.5
2	Մարգարյան Գոռ Արարատի	փոխտնօրեն	պ.գ.թ.	160.0
3	Ցականյան Ռուսլան Արշակի	գիտ.քարտուղար	պ.գ.թ.	140.0
4	Ստեփանյան Կարինե Շամխորի	գլխ. հաշվապահ		132.0
5	Վարդանյան Վրույր Կոստանի	տնտ.բաժ. վար./վարորդ		125.0
6	Աբրահամյան Լուսյա Մնացականի	գրադար. վար.		97.0
7	Սարգսյան Հասմիկ Ենոքի	գրադարանավ.		90.0
8	Հովհաննիսյան Գայանե Սաշա	կադրերի տես.		75 . 0
9	Կարախանյան Նաիրա Վլադիմիրի	գործավար		93.0
10	Բարսեղյան Գայանե Սուրենի	գրապահ. հսկիչ		90.0
11	Մաթևոսյան Արմենուհի Վարդանի	հավաքարար		110.0
12	Սաֆրաստյան Ռուբեն Արամի	գլխ. գիտաշխ.	պ.գ.դ.	160.8
13	Բայբուրդյան Վահան Առաքելի	գլխ. գիտաշխ.	պ.գ.դ.	101.0
14	Քոսյան Արամ Վաղարշակի	բաժնի վարիչ	պ.գ.դ.	105.0
15	Հովհաննիսյան Նիկոլայ Հովհաննեսի	գլխ. գիտաշխ	պ.գ.դ.	101.0
16	Հակոբյան Ալեքսան Հակոբի	բաժնի վարիչ	պ.գ.դ.	105.0
17	Հարությունյան Լիլիթ Միշայի	բաժնի վարիչ	պ.գ.թ.	105.0
18	Բոզոյան Ազատ Արտաշի	բաժնի վարիչ	պ.գ.դ.	105.0
19	Մելքոնյան Քրիստինե Ֆելիքսի	բաժնի վարիչի պաշտոնակատար	պ.գ.թ.	105.0
20	Կոզմոյան Արմանուշ Կոզմոյի	գլխ. գիտաշխ.	բ.գ.դ.	101.0
21	Ստեփանյան Հասմիկ Ավետիսի	առաջ. գիտ.	պ.գ.դ.	98.0
22	Մաթևոսյան Արթուր Կորյունի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
23	Փաշայան Արաքս Ասատուրի	առաջ. գիտ.	պ.գ.թ.	98.0
24	Կոստիկյան Քրիստինե Պետրոսի	առաջ. գիտ.	պ.գ.դ.	45.6
25	Հարությունյան Աղավնի Ալեքսանդրի	բաժնի վարիչի պաշտոնակատար	պ.գ.թ.	105.0
26	Մաիլյան Բենիամին Վիկտորի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	96.0
27	Տեր-Մաթևոսյան Վահրամ Համազասպի	առաջ. գիտ.	պ.գ.թ.	47.7
28	Ավետյան Կարինե Դերենիկի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
29	Գրեկյան Երվանդ Համբարձումի	առաջ. գիտ.	պ.գ.դ.	47.7
30	Հովհաննիսյան Անուշ Ռաֆիկի	ավագ գիտ.		96.0
31	Իսկանդարյան Գոհար Մանվելի	բաժնի վարիչի պաշտոնակատար	պ.գ.թ.	105.0
32	Հովսեփյան Լևոն Սահակի	ավագ գիտ.	պ.գ.թ.	47.7

՞ Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը

33	Վարդանյան Արամ Ռոբերտի	առաջ. գիտ.	պ.գ.թ.	98.0
34	Սամսոնյան Հայկ Խաչիկի	ավագ գիտ.	պ.գ.թ.	47.7
35	Մանվելյան Արմեն Բախշիի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
36	Իսրայելյան Արմեն Հրաչիկի	գիտաշխ.	բ.գ.թ.	47.7
37	Մանուկյան Տաթևիկ Մովսեսի	գիտաշխ.		94.0
38	Հմայակյան Հասմիկ Հարությունի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
39	Գասպարյան Արամ Աշոտի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
40	Գևորգյան Գոռ Գևորգի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
41	Խանզադյան Մարիամ Գագիկի	գիտաշխ.		94.0
42	Վարդանյան Գրիգոր Կարապետի	ավագ գիտ.	պ.գ.թ.	47.7
43	Նավասարդյան Նազելի Սերժիկի	ավագ գիտ.	պ.գ.թ.	96.0
44	Հարությունյան Եվա Վիկտորի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	96.0
45	Ավդալյան Արթուր Արազածի	կրտս. գիտ.		47.7
46	Թամրազյան Անուշ Հրաչյայի	կրտս. գիտ.		93.3
47	Թամոյան Հասան Մախմուդի	գիտաշխ.		45.6
48	Սահակյան Կարոլինա Մարտիկի	գիտաշխ.		94.0
49	Միքայելյան Տիգրան Լեոնիդի	գիտաշխ.		45.6
50	Մխիթարյան Գոհար Ժորայի	ավագ գիտաշխ.	պ.գ.թ.	96.0
51	Նահապետյան Գաբրիել Հայկազի	կրտսեր գիտ.		47.7
52	Ղահրիյան Մուշեղ Հայկազնի	գիտաշխ.	պ.գ.թ.	94.0
53	Կոստանյան Արարատ Աբրահամի	կրտս. գիտ.		93.3
54	Աղամալյան Թամարա Նորայրի	կրտս.գիտ.		93.3
55	Տոնոյան Աիդա Ֆերդինանտի	ավագ լաբ.		90.0
56	Քոսյան Սիրանուշ Արամի	ավագ լաբ.		93.3
57	Թորոսյան Վերոնիկա Աշոտի	ավագ լաբ.		93.3
58	Ալեքսանյան Անուշ Սարգսի	հաշ.օգ.գանձ.		45.6
59	Մելքոնյան Եկատերինա Կարապետի	գրադարան.		93.3
60	Գրիգորյան Նարինե Գևորգի	գրապահ.հավ.		93.3
61	Աբաջյան Արամ Աշոտի	գիտաշխ.	բ.գ.թ.	47.7
62	Միրզաբեկյան Գեորգի Ալեքսանդրի	գիտաշխ.	պ.գ.թ.	94.0
63	Գևորգյան Ռուզաննա Մուշեղի	ավագ լաբ.		93.3
64	Մանասերյան Ռուբեն Լևոնի	առաջ.գիտաշխ.	պ.գ.դ.	98
Ընդամենը				5696.7

Կազմակերպության տնօրեն՝ _____ Ռոբերտ Ղազարյան
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կազմակերպության անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Կ.Տ.